Հայաստանի աուդիտորների և
փորձագետ հաշվապահների պալատ

ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Ձեր մասնագիտական առաջընթացը սկսվում է Պալատից

Միջազգային ստանդարտներին համապատասխան պրոֆեսիոնալ հաշվապահի և աուդիտորի որակավորման դասընթացներ

ԳՐԱՆՑՎԵԼ ԴԱՍԸՆԹԱՑԻՆ

ԴԻՏԵԼ ԾՐԱԳԻՐԸ

✆ 010 24-91-78 (ն. 203, 206, 207), 077 24-91-78
✉ caaa.am , Մոնթե Մելքոնյան 46/2

1 Պալատի մասին

Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատը (ՀԱՊ) հիմնադրվել է 1997 թվականին և իրականացնում է Հաշվապահների միջազգային դաշնության (ՀՄԴ/IFAC) ստանդարտներին համապատասխան պրոֆեսիոնալ հաշվապահի և աուդիտորի որակավորում շնորհող կրթական ծրագիր:

Պալատի կողմից իրականացվող դասընթացները և քննությունները համապատասխանում են ՀՄԴ կրթական միջազգային ստանդարտներին (IES) : Քննությունների արդյունքները **ճանաչվում են ACCA-ի կողմից** որպես ազատումներ վերջինիս համապատասխան քննություններից: **Պալատը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից միակ հավատարմագրված մասնագիտացված կառույցն է:**

Ուսուցումն իրականացվում է որակավորման քննական առարկաների նորացված, կրթության միջազգային ստանդարտներին (ԿՄՍ) համապատասխան դասագրքերով: Որակավորումները տրվում են անժամկետ:

2 Ինչու ընտրել Պալատը

Միջազգային ճանաչում

ՀՄԴ/IFAC ստանդարտներին համապատասխան ծրագիր, ACCA-ի կողմից ճանաչված քննություններ:

Անժամկետ որակավորում

Ստացված որակավորումը գործում է անժամկետ՝ շարունակական մասնագիտական զարգացման պահանջների պահպանման պարագայում:

Փորձառու դասախոսներ

Ոլորտի առաջատար մասնագետներ՝ գործնական փորձով և մասնագիտական բարձր հեղինակությամբ:

Ժամանակակից դասագրքեր

ԿՄՍ-ներին համապատասխան նորացված ուսումնական նյութեր:

27+ տարվա փորձ

Հիմնադրվել է 1997 թ.՝ միավորելով աուդիտորների և հաշվապահների համայնքը:

Տարեկան 2 քննաշրջան

Հստակ ժամանակացույց՝ տարեկան նվազագույնը երկու քննաշրջանով:

7	2	14	27+
Առարկա	Որակավորում	Դասախոս	Տարվա փորձ

3 Որակավորման ծրագիր

Պալատի որակավորման ծրագիրը ներառում է 7 առարկա՝ ընդգրկելով հաշվապահական հաշվառման, աուդիտի, իրավունքի և ֆինանսների կարևորագույն բնագավառները: Ծրագիրը հաջողությամբ ավարտելուց հետո շնորհվում են **փորձագետ հաշվապահի** և/կամ **աուդիտորի** որակավորումներ:

Փորձագետ հաշվապահ

6 առարկայի քննություն

- Ֆինանսական հաշվառման հիմունքներ
- Կառավարչական հաշվառում
- Իրավագիտության հիմունքներ և կորպորատիվ իրավունք
- ՀՀ հարկային օրենսդրություն
- Ֆինանսական կառավարում
- Ֆինանսական հաշվետվությունների պատրաստում

Աուդիտոր

7 առարկայի քննություն

- Ֆինանսական հաշվառման հիմունքներ
- Կառավարչական հաշվառում
- Իրավագիտության հիմունքներ և կորպորատիվ իրավունք
- ՀՀ հարկային օրենսդրություն
- Ֆինանսական կառավարում
- Ֆինանսական հաշվետվությունների պատրաստում
- Աուդիտ և հավաստիացում

Քննությունների մասին

Անցողիկ միավոր. տվյալ առարկայի համար սահմանված միավորների **50%-ը կամ ավելին**

Տարեկան քննաշրջաններ. Նվազագույնը

2 քննաշրջան

Որակավորում ստանալու նախապայմանները

1. Հաջողությամբ անցնել համապատասխան քննությունները
2. Բարձրագույն կրթություն
3. Անհրաժեշտ մասնագիտական աշխատանքային փորձ

4 Դասընթացներ

1 Ֆինանսական հաշվառման հիմունքներ

Հաշվապահական հաշվառման գիտելիքներ՝ գործառնությունների գրանցում, ՖՀՄՍ-ներին համապատասխան հաշվետվությունների պատրաստում և վերլուծություն:

Դասախոսներ՝ Գ. Ղազարյան, Թ. Ստեփանյան

2 Կառավարչական հաշվառում

Ֆինանսական տեղեկատվության կիրառում՝ ինքնարժեքի հաշվարկ, կառավարչական որոշումներ, պլանավորում և վերահսկողություն:

Դասախոս՝ Գ. Մնացականյան

3 Իրավագիտության հիմունքներ և կորպորատիվ իրավունք

Իրավագիտության և ՀՀ կորպորատիվ իրավունքի գիտելիքներ՝ հաշվապահի մասնագիտական գործունեության համար:

Դասախոսներ՝ Շ. Վարդանյան, Պ. Մկրտչյան

4 ՀՀ հարկային օրենսդրություն

Հարկերի և պարտադիր վճարների հաշվարկման, վճարման և հաշվետվությունների ներկայացման գիտելիքներ:

Դասախոս՝ Արտակ Հովհաննիսյան, Գաբրիել Միքայելյան

5 Ֆինանսական կառավարում

Զարգացնում է ֆինանսական կառավարման գիտելիքներ և ապահովում խորացված հմտություններ՝

- Ֆինանսավորման տարբեր աղբյուրների և կապիտալ ներդրումների հնարավորությունների առավելությունները վերլուծելու և կիրառելու համար
- Հաշվապահին և ֆինանսիստին անհրաժեշտ մասնագիտական գիտելիքների ապահովման համար
- Կառավարչական հաշվառման մեթոդները ձեռնարկատիրական գործունեության պլանավորման և վերահսկողության համար:

Դասախոսներ՝ Ռաֆֆի Ալեքսանյան, Աշոտ Բարսեղյան, Գևորգ Ասլանյան

6 Ֆինանսական հաշվետվությունների պատրաստում

Ապահովում է խորացված գիտելիքներ և հմտություններ հաշվապահական հաշվառման և ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ազգային և միջազգային կարգավորումների, ՖՀՄՍ-ներին համապատասխան առանձին և համախմբված ֆինանսական հաշվետվություններ պատրաստելու և ներկայացնելու, ինչպես նաև վերլուծության վերաբերյալ:

Դասախոս՝ Արմինե Ասոյան, Մարիամ Ավետիսյան, Լիդա Թադեոսյան

7 Աուդիտ և հավաստիացում

Ապահովում է գիտելիքներ և հմտություններ՝

- Աուդիտի միջազգային ստանդարտները կիրառելու համար
- Որակյալ աուդիտորական գործունեություն իրականացնելու տեսական և գործնական հիմքերի ապահովման համար:

Դասախոս՝ Իրինա Անանյան

5 Դասախոսներ

Դասընթացները վարում են հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության ոլորտում մասնագիտական բարձր հեղինակություն ունեցող անձինք:

Գրիգոր Ղազարյան

ACCA

Ֆինանսական հաշվառման հիմունքներ

Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատի անդամ, ACCA անդամ, «Վեոլիա Ջուր» ՓԲԸ գլխավոր հաշվապահ:

Թեհմինե Ստեփանյան

Տ.Գ.Թ.

Ֆինանսական հաշվառման հիմունքներ

ՀՊՏՀ ֆինանսական հաշվառման ամբիոնի դոցենտ, տ.գ.թ., ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների դասախոս:

Գրիգոր Մնացականյան

Տ.Գ.Թ.

Կառավարչական հաշվառում

Տնտեսագիտական գիտությունների թեկնածու, դոցենտ, «Իրիս Բիզնես Ինկուբատոր» հիմնադրամի հաշվապահության փորձագետ:

Շուշանիկ Վարդանյան

Իրավագիտության հիմունքներ և կորպորատիվ իրավունք

ՀՀ փաստաբանների պալատի անդամ, Մնանկության գործերով կառավարիչ, «Ակբա բանկ» ԲԲԸ գլխավոր կորպորատիվ իրավաբան:

Պետիկ Մկրտչյան

Իրավագիտության հիմունքներ և կորպորատիվ իրավունք

ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության պետի տեղակալ, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի դասախոս, Արդարադատության ակադեմիայի դասընթացավար:

Արտակ Հովհաննիսյան

ՀՀ հարկային օրենսդրություն

Պալատի խորհրդի անդամ, որակավորված աուդիտոր:

Գաբրիել Միքայելյան Տ.Գ.Թ.

ՀՀ հարկային օրենսդրություն

Պալատի հարկային հանձնաժողովի անդամ, տ.գ.թ., դոցենտ, ՀՊՏՀ դասախոս:

Ռաֆֆի Ալեքսանյան FCCA Տ.Գ.Թ.

Ֆինանսական կառավարում

Ֆինանսական խորհրդական, հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության հանրային վերահսկողության խորհրդի անդամ FCCA, տ.գ.թ.:

Աշոտ Բարսեղյան

Ֆինանսական կառավարում

Պալատի անդամակցության հանձնաժողովի նախագահ, որակավորված աուդիտոր, «Այ էֆ Փի» աուդիտորական ընկերության ղեկավար:

Գևորգ Ասլանյան Տ.Գ.Թ.

Ֆինանսական կառավարում

Պալատի անդամակցության հանձնաժողովի անդամ, «ՖԻՆՄԱՍ Քոնսալթինգ» ընկերության ղեկավար, ՀՊՏՀ դասախոս, տ.գ.թ., փորձագետ հաշվապահ:

Լիդա Թադեոսյան

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստում

Պալատի խորհրդի անդամ, որակավորված աուդիտոր «Ռոք Կապիտալ» ԲԲԸ գլխավոր հաշվապահ:

Արմինե Ասոյան ACCA

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստում

Պալատի որակավորված աուդիտոր, «Նեքսիա Արմենիա» ՓԲԸ, աուդիտի ղեկավար, ACCA:

Մարիամ Ավետիսյան FCCA

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստում

Պալատի աուդիտորական գործունեության հանձնաժողովի և հաշվապահական հաշվառման հանձնաժողովի անդամ, Բի-Դի-Օ Արմենիա ՓԲԸ աուդիտ տնօրեն, FCCA:

Իրինա Անանյան FCCA

Աուդիտ և հավաստիացում

Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատի անդամ, «Դի Էս Էյ խորհրդատվական խումբ» ՓԲԸ ֆինանսական և բիզնես խորհրդատվական ծառայությունների գծով տնօրեն, FCCA, MBA:

Ինչու ընտրել Պալատի դասախոսներին

14
փորձառու դասախոսներ՝ գործնական փորձով

FCCA/ACCA
միջազգային և այլ որակավորում ունեցող մասնագետներ

27+
տարվա մասնագիտական համայնքի ղեկավարում

6 Դասընթացը իրական միջավայրում

Պալատի որակավորման դասընթացներն աչքի են ընկնում մասնագիտական մթնոլորտով, գործնական մոտեցմամբ և մասնակիցների ակտիվ ներգրավվածությամբ:

7/7	ACCA	∞
Առարկա համապատասխանում է ՀՄԴ ստանդարտներին	Քննությունների արդյունքները ճանաչվում են ազատումներով	Որակավորումն անժամկետ է

ՍԿՍԵՔ ՁԵՐ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԸ ԱՅՍՕՐ

Գրանցվեք որակավորման դասընթացներին

Միացեք հարյուրավոր մասնագետների, ովքեր արդեն ստացել են իրենց որակավորումը:

Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ

Chamber of Auditors and Expert Accountants of Armenia

ՀԱՍՑԵ

Մոնթե Մելքոնյան 46/2
Երևան, Հայաստան

ՀԵՌԱԽՈՍԱՀԱՄԱՐ

010 24-91-78 (203, 206, 207)
077 24-91-78

ԿԱՅՔ

caaa. am

ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Մանրամասների համար այցելեք
Պալատի պաշտոնական կայքը

© ՀԱՊ — Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ